

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ. Մուրադյանի

Դ. Սամսոնյանի

Ա. Աղաբաբյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Փ. Կարապետյանի

ՀՀ հանրապետական գործադիր մարմինների
տարածքային ծառայությունների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզի առողջապահական,
կրթական, մշակութային հիմնարկների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների
ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ '

1. ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի 2011 թվականի գործունեության և
մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն

/Ա. Ղահրամանյան - ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին ՀՀ օրենքներից, ՀՀ Նախագահի հրամանագրերից ու կարգադրություններից, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներից, ՀՀ Արմավիրի մարզպետի որոշումներից ու կարգադրություններից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներին ծանոթացում

/Յու.Մանվելյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ/

3. Հայտարարություններ՝

Ա.Այվազյան ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ

Հ.Ալեքսանյան ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային
հողային պետական տեսչության պետ

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ներկայացվեց ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի 2011 թվականի գործունեության և մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունը /կցվում է/:

Հաշվետվությունը ներկայացնելուց հետո մարզպետը նշեց, որ համայնքներում խմելաջրի մատակարարման ջրագծերը գտնվում են վատ վիճակում և դրանց կարգավորման խնդիրը ներկայացվել է ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը և Տարածքային կառավարման նախարարին և արդյունքում նախատեսվել է ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ հատկացնելու համապատասխան ֆինանսական միջոցներ խնդիրը լուծելու համար:

Նա նշեց նաև, որ համայնքներում անմիխիթար վիճակում են գտնվում էլեկտրահամակարգերը: Էլեկտրագծերը հին են և չեն համապատասխանում ժամանակակից գործող պահանջներին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «ՀԷՑ» ՓԲԸ ղեկավարության հետ շրջել համապատասխան համայնքներում, քննարկել իրավիճակը լուծումներ գտնելու նպատակով: Մարզպետը համայնքների ղեկավարներին իրազեկեց, որ տարածքային կառավարման նախարարի հանձնարարությամբ՝ մարզի 97 համայնքներից 33 %-ում, /37 համայնքներ/

իրականացվելու է վարչական հսկողություն և առաջիկա 3 տարվա ընթացքում մարզի ողջ համայնքներում կիրականցվի վարչական վերահսկողության գործընթացը:

Նա իրազեկեց նաև, որ միայն 2011 թվականին ՀՀ Արմավիրի մարզում իրականացվել են 16 մլրդ 280մլն. դրամի ներդրումներ՝ ընդգրկելով տարբեր բնագավառներ և ոլորտներ՝ գյուղատնտեսության -8874788.2, կրթության- 3176530.2, քաղաքաշինության -3040160.8, խմելու ջրամատակարարման -716645.5, ճանապարհաշինության -148313.3, մշակույթի -118770.8, սոցիալական -40863.0, գազամատակարարման -38350.0, էներգետիկայի -25462.8, առողջապահության-15000.0, սպորտի -9512.0, բնապահպանության -3710.0:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզխորհրդի նիստի մասնակիցներին իրազեկեց, որ դեռևս նախորդ տարվանից ավանդույթ դարձած «Լավագույնն իր ոլորտում» 16 անվանակարգերի վերաբերյալ մրցութային գործընթացն այս տարի էլ կանցկացվի: Առաջիկայում կքննարկվեն դրանք և արդյունքների ամփոփման աշխատանքների ավարտից հետո կհանձնվեն մրցանակները: Մարզպետը շեշտեց նաև, որ լավագույն համայնքները իրենց իրականացրած աշխատանքների համար կխրախուսվեն, իսկ թերի և ոչ պատասխանատու աշխատանքներ իրականացրածները՝ անհրաժեշտության դեպքում նաև կենթարկվեն պատասխանատվության:

Օրակարգային 2-րդ հարցի՝ ՀՀ օրենքներից, ՀՀ նախագահի հրամանագրերից ու կարգադրություններից, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներից, ՀՀ Արմավիրի մարզպետի որոշումներից ու կարգադրություններից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների ծանոթացմամբ ելույթ ունեցավ իրավաբանական բաժնի պետ Յու.Մանվելյանը: Նա համայնքների ղեկավարներին տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված ՀՕ -342-Ն և ՀՕ -347-Ն օրենքներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, համաձայն որոնց «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերը փոխարինվել են քաղաքային համայնքներում՝ քաղաքապետարանների, իսկ գյուղական համայնքներում՝ գյուղապետարանների աշխատակազմերով, որոնք իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական

հիմնարկներ են և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա են հաշվառման: Յու Մանվելյանը մասնավորապես նշեց, որ այս բոլոր փոփոխությունները պետք է 7-օրյա ժամկետում իրականացնել պետական ռեգիստրով, հակառակ դեպքում եթե հայտնաբերվի առանց փոփոխությունների կատարված որևէ գործառույթ, այն կդիտվի որպես անօրինական գործողություն: Նախկինում եթե եղել են որևէ հակասություններ կանոնադրությունների և հաստիքացուցակների հաստատման, համայնքների ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունների հետ կապված, ներկայումս դրանք օրենսդրորեն հստակեցվել են և ավելի ընդլայնվել է համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակը, ինչպես նաև «Համայնքային ծառայության» օրենքում իրականացվել են մի քանի կարևոր դրույթների փոփոխություններ, որոնց միջոցով ամրագրվել է համայնքային ծառայողի պաշտպանվածությանը՝ հավելեց Յու.Մանվելյանը, միաժամանակ հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված ՀՕ-352-Ն օրենքով լրացումներ է կատարվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում, համաձայն որի պետության և համայնքների սեփականության հողամասեր սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների շինարարության ու դրանց սպասարկման համար: Նշված օրենքները հրապարակվել են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի 2012 թվականի հունվարի 9-ի N 2 համարում և ուժի մեջ են մտել 2012 թվականի հունվարի 19-ից:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը ամփոփելով Յու.Մանվելյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը, հավելեց, որ ՀՀ ԱԺ-ում և տարածքային կառավարման նախարարությունում քննարկումներ են տարվում գույքահարկի և հողի հարկի օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ, որոնք հիմնականում վերաբերում են մինչև 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ ապառքների և տույժ ու տուգանքների զիջմանը:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարություններով հանդես եկան՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին մարզային հողային պետական տեսչության պետ Հ.Ալեքսանյանը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը իր հայտարարությամբ նշեց, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշման համաձայն՝ պետական աջակցության ծրագրով ՀՀ Արմավիրի մարզի համայնքների հողօգտագործողներին հատկացվելու է 2500 տոննա դիզելային վառելանյութ՝ 1 լիտրը 350 դրամ արժեքով: Գործընթացը ավելի կազմակերպված և արագ իրականացնելու համար համայնքների ղեկավարները անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ստանան մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունից: Նշված դիզելային հավաքագրման վերջնաժամկետ է սահմանվել 01.03.2012 թվականը:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը անդրադառնալով Ա.Այվազյանի կողմից արված հայտարարությանը՝ հավելեց, որ ՀՀ Արմավիրի մարզին հատկացվելիք 2500 տոննա վառելանյութը և 25000 տոննա պարարտանյութը իրականացվում է ՀՀ կառավարության ջանքերով և մարզպետարանի աջակցությամբ: 1-ին խմբաքանակը մարզ կբերվի առաջիկա օրերին, իսկ 2-րդ խմբաքանակը՝ մինչև փետրվարի 28-ը:

Ուստի համայնքների ղեկավարները տեղերում պետք է ճիշտ կազմակերպեն դրանց բեռնաթափման, բաշխման և նպատակային օգտագործման ճիշտ գործընթացը, քանի որ հետագայում ուսումնասիրվելու է յուրաքանչյուր լիտր դիզելային վառելանյութի ողջ շարժը՝ մասնավորապես շեշտեց նա:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Հ.Ալեքսանյանը հանդես եկավ մի շարք հայտարարություններով, որոնք վերաբերվում էին համայնքներում հողային հարաբերություններում առկա սուբյեկտների վերաբերյալ անճշտությունների ուղղման, կադաստրային հատակագծերում և քարտեզներում առկա անճշտություններին, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման նոր կարգին: /հայտարարությունները կցվում են/:

Արված հայտարարությունների կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետն առաջարկեց համայնքների ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ հայտարարություններում նշված խնդիրները օրենսդրությանը համապատասխան և սահմանված ժամկետներում լուծելու համար:

Օրակագրային հարցերի քննարկման և հայտարարությունների ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան